ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-062²-11.10.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2021 թվականի փետրվարի 16-ի ՀՕ-48-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում «4-րդ մասը՝ սույն օրենքի պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո» բառերը փոխարինել «4-րդ մասը՝ 2022 թվականի օգոստոսի 1-ից» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-062-11.10.2021-ՏՀ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>(Կ-062[1]-11.10.2021-ՏՀ-011/1), «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Կ-062[2]-11.10.2021-ՏՀ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕԵՐՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Կ-062[3]-11.10.2021-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	**ՀՀ կառավարություն**	վերնագիր	Նախագծի վերնագրից հանել երկրորդ «Հայաստանի Հանրապետության» և «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	1-ին հոդվածից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել	Ընդունվել է	Ընդունվել է
3.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«(այսուհետ օրենք)»	Ընդունվել է	Ընդունվել է

			ձեւակերպումը փոխարինել «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպմամբ		
4.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«ճանապարհային թերթիկ» բառերից հետո լրացնել «եզրույթը սահմանող» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
5.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«և» բառը փոխարինել «կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
6	**ՀՀ կառավարություն**	2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Օրենքի 4-րդ հոդվածում լրացնել «երթուղային թերթիկ» եզրույթի սահմանումը, իսկ 2-րդ հոդվածով Օրենքի 11-րդ հոդվածում լրացվող նոր՝ 8-րդ մասով նախատեսվում է էլեկտրոնային երթուղային թերթիկի կիրառում: էլեկտրոնային երթուղային թերթիկի կցումը ճանապարհային թերթիկին հնարավոր չէ, եթե վերջինիս էլեկտրոնային տարբերակ նախատեսված չէ Նախագծով եւ ՀՀ օրենսդրությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

			Առաջարկվում է հանել <<էլեկտրոնային երթուղային թերթիկների կիրառման և>> բառերը		
7.	**ՀՀ կառավարություն**	Նախագծին ավելացնել նոր նախագիծ	Ավելացնել նոր՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին>> օրենքի նախագիծ	Ընդունվել է	Ընդունվել է
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ					
8.	**ՀՀ կառավարություն**	վերնագիր	Նախագծի վերնագրից հանել երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
9.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծին ավելացնել նոր նախագիծ	Ավելացնել նոր՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին>> օրենքի նախագիծ	Ընդունվել է	Ընդունվել է